մտաւոր կեանքը, որ չէ պաշտպանում նրանց, որոնք խօսում են նրա անունից։ Իսկ ընդհակառակն յետադէմ մամուլի խաւար մտքերը կարող են ապականիչ ներգործութիւն ունենալ միմիայն ընթերցող հասարակութեան փոքրամասնութեան վրա, որոնք սէր ունենալով դէպի ընթերցանութիւնը, առհասարակ, և դեռ ևս հաստատ համոզմունքների տէր չը լինելով, կարող են ենթարկվել և ազատամիտ և յետադէմ մամուլի ազդեցութեանը, նայելով թէ որը նրանցից իրաւունք ունի աւելի ազատ խօսելու, կամ աւելի հաստատ քայլերով է ընթանում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԴԱՐԱՋԻՉԱԳԻՑ

—

Յուլիսի 20

Վերջապէս փոքրիկ Դարաչիչագն էլ ունի իր նորութիւնները, որոնց համար աւելորդ չէր լինի տեղեկութիւն տալ «Մշակի» ընթերցողներին։ Յուլիսի 19-ին մի կռիւ տեղի է ունենում մի հայ տղի և Ախտայ կայարանի ձիաւորների մէջ (земская стража)։ Վերջինները մօտաւորապէս քսան մարդ իրենց մեծաւորի (Дистанціи начальникъ) առաջնորդութեամբ ձերբակալեցին Էջմիածնայ գաւառի Խաթունարիս գիւղի բնակիչ յայտնի աւազակապետ Գասպար Բուլբուլեանցին, որը սրանից երկու ամիս առաջ հինգ ուրիշ աւազակների հետ փախաւ Երևանի բանտից։ Շատ հետաքրքիր է լսել նկարագիրը այն փոքրիկ պատերազմի, որ տեղի է ունեցել Բուլբուլեանցի և ձիաւորների մէջ։ Տեղական ոստիկանութեանը իմաց են տալիս աւազակապետի այդ կողմերում լինելը, որը իսկոյն միջոցների է դիմում նրան բռնելու և այդ յաջողում է։ Ախտա և Ելենովկա կայարանների մէջ Բուլբուլեանցը տեսնում է ձիաւորների մի խումբ դէպի ինքը դիմելիս. նա հասկանում է վտանգը, մի կողմից փախչում է, միւս կողմից պիրօղի հրացանից անդադար թողնում է կրակ թշնամու վրա։ Հրացանաձգութիւններ լինում են երկու կողմից։ Բուլբուլեանցի ձին վիրաւորվում է. նա իջնում է նրա վրայից և պատսպարվում մի քարի տակ. այդտեղից նա հրացանով բաւական երկար ժամանակ կռւում է, ի վերջոյ ձիաւորների հրացաններից երկու գնդակ ջարդ ու փշուր են անում աւազակի աջ ձեռքը և նա ակամայ անձնատուր է լինում։ Յուլիսի 19-ին Բուլբուլեանցին իր վիրաւոր ձիու վրա նստացրած բերին Դարաչիչագ. նա 30 տարին չանցած մի տղամարդ էր երևում աննշան դէմքով, կարճ հասակի տէր։ Ձիաւորների մեծաւորը պատմում էր թէ մենք 300 փամփուշտ արձակեցինք դրա վրա, իսկ դա միայն 200։ Ձիաւորներից մէկը վիրաւորված էր, իսկ նրանցից մի քանիսի գլխարկների վրայից թռել էր գնտակը, թողնելով մորթեայ փափի վրա իր հետքերը։ Բուլբուլեանցը մեղադրված է մի քանի յանցանքներում և վաղուց Երևանի նահանգական դատարանը վճռել է նրա աքսորը Սիբիրիայում։ Երբ անց էին կացնում Բուլբուլեանցին Դարաչիչագի փողոցից, նահանգական դատարանի մի պաշտօնեայ ճանաչում էր աւազակապետին նրան մի քանի անգամ տեսած լինելով դատարանի դահլիճում, մօտեցաւ նրան ասելով այս խօսքերը. «Այ տղայ, Բլբուլ, չի ամաչեցիր որ սաղ բռնեցին քեզ։» Փչռված ձեռքի կսկիծը նա ուրախութեամբ տանում էր, քան թէ այդ խօսքերը, որ լսելուն պէս յուսահատ և մելամաղձոտ ձայնով գոռաց իր շրջապատող ձիաւորներից մէկին, «Խիդիր, պատմիր աղային ինչպէս բռնեցիք ինձ։» Ձիաւորի մանրամասն պատմութիւնից երևում էր որ արդարև նա պաշտպանվել է հերոսաբար։ Երկու ժամ Բլբուլեանցին Դարաչիչագ պահելուց յետոյ ուղարկեցին նրան Երևանի բերդը—նրա նախկին բնակարանը։

Մի քանի օր սրանից առաջ մի 10 տարեկան երեխայ, մերձակայ անտառում խաղալիս իր ընկերների հետ, վայր է ընկնում գետնի վրա, մի ուրիշ երեխայ ընկնում է նրա վրա և կոտրում ոտի ոսկորը երեք տեղից։ Իսկոյն հրաւիրում են Քարվանսարայ գիւղից Ազիզ անունով մի մարդու, որը բժշկում է հիւանդին ամենահասարակ միջոցներով։ Կոտրված ոտի վրա չը գիտեմ ինչ դեղ է դնում, ոտը չորս կողմից փոքրիկ տախտակներով ամուր կապում, և ահա մի քանի օր է որ երեխան բաւական առողջ է զգում ոտը և ես հաւատացած եմ շատ շուտով նա մանկը դայ։ Բայց ինչ կանէին այդ հանգամանքներում մեր երևելի ուսում ստացած բժշկները. հասկանալի է, որ նրանք ոտը կտրելու վրա կը մտածէին, Վէրքեր և մարմնի կոտրած անդամները բժշկելում, թող մեր երևելի բժշկները գան դասեր առնեն ասիական բժշկներից և ոչ թէ հալածեն նրանց։

Եղանակը այստեղ անձրևային է. ցորենի հունձը բաւական յաջող։

Նամակս վերջացնում էի, երբ լսեցի որ Երևանում տիֆի նշաններ կան, բայց ով պէտք է այդ սարսափելի երևոյթի դէմ մաքառի։ Այս բոպէին գրեթէ Երևանում բժշկներ չը կան. իսկ քաղաքային վարչութիւնը զբաղված է աւելի կարևոր հարցերով։

Ա.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Յուլիսի 13

Թէպէտ այժմեան դարը արդէն սկսել է շատ լաւ զգալ սուրբ Գիրք կարդալու անհրաժեշտութիւնը, այնպէս որ ձեռքից ձեռք առնում և կարդում է ոչ միայն բարձր գիտնականը, այլ նաև ամենավերջին աշխատասէր մշակը, բայց մենք, հայերս, զուրկ լինելով հասկանալի աշխարհաբար լեզուով աւետարանի էական նշանակութիւնը, ըստ արժանւոյն, հասկանալուց, ստիպված ենք լինում մեր քմայ և ցանկութեան յարմար թարգմանելով խանգարել նրա սուրբ, վսեմ և բարձր նշանակութիւնը։ Ուստի փոխանակ ստանալու սպասելի օգուտներ, ստանում ենք սարսափելի թշուառութիւններ, լինելով սուտ լուսաւորիչներ, անմիտ իմաստուններ, խորամանկ առաքինիներ, ճարտարահիւս զրպարտիչներ, անզրագէտ ուրամաբաններ, թոյլասիրտ զինուորներ և այլն և այլն։

Այս թշուառութեան առաջը պէտք առնէ եկեղեցին և ուսումնարանը։ Եկեղեցւոյ մէջ, իբրև բարոյագիտութիւն համալսարանի, պէտք է գոնէ իւրաքանչիւր կիրակի օր հասկանալի բարբառով խօսել քարոզի բարոյականացնող, մտաւորապէս զարգացնող և քաղաքակրթիչ խօսքը։ Մարդս որքան էլ կոպիտ, որքան էլ չար լինի, դարձեալ կարող է համոզվել. նա կարող է նորոգվել և լինել ընդունակ բազմատեսակ առաքինութիւններ գործելու, եթէ միայն գտնվեն շարժող, համոզող և զարթնացնող ոյժեր։ Մի և նոյն նպատակաւ պէտք է մտցնել նաև ուսումնարանների մէջ դասախօսութիւններ։ Երեխաները միշտ սիրում են քաղցր և ազնիւ խօսքը քարոզի։ Նրանք միշտ հակված են դէպի արդարութիւնը և լոյսը։ Նրանք փափագում են ուղեցոյց առաջնորդի դէպի լուսոյ և արդարութեան քաղաքը։ Այո, եթէ այս ընթացքով մեր ժողովուրդը և մեր երեխաները դաստիարակվեն, մեծայոյս եմ, որ մեր ազգը շատ կարճ կարող է հասնել աւետեաց երկիրը։ Նա կարող է աշխարհիս ամենազարգացած և ամենաքաղաքակիրթ ազգերից մէկն համարվել, իբրև ընդունակ և աշխատասէր ազգ։ Բայց ցաւալին այն է, որ մեր այս թշուառութեան մեծ մասամբ օգնում են նաև մեր ուսումնարանները։ Ուսումնարանների մէջ կրօնի դասերը սովորացնվում են միայն լոկ սխօլաստիքական չորս ոտամաք կանոններով։ Աշակերտը ստիպված է թուղթակի պէս անդիր բերան առնել սուրբ Գրքի պատմութիւնները և վկայութիւնները, իբրև մի կանոն առանց հասկանալու նրանց իմաստը և ոգին։ Իսկ նոր մանկավարժութիւնը գրեթէ ամենայն առարկայ աշխատում է սովորեցնել վերլուծողական ճանապարհով։ Մտնելով քաղաքական կեանքի մէջ իմ բազմամեայ ուսուցչութիւնս և քանի մի տարվայ քահանայութեանս փորձերը ապացուցին, որ մեր ժողովրդոց և մեր ուսումնարաններին անչուշտ հարկաւոր է ունենալ մի պարզ հասկանալի լեզուով կրօնի դասագիրք բարոյականացնող, մտաւորապէս զարգացնող և քաղաքակրթիչ ուղղութեան։

Եւ որովհետև մեր այս պահանջի համապատասխան աղբիւրը գտնվում է միմիայն Աւետարանի փրկարար վարդապետութեան մէջ, և չորս աւետարանչաց ուղղութիւնը ծառայում է մի և նոյն նպատակի, ուստի չը նայելով գործի ծանրութեան և իմ տկարութեանս, բաւական համարեցի, վեց տարուց աւելի պատերազմելով զանազան արգելառիթների, հալածանքների, զըրպարտութիւնների հետ, ժողովել հարիւրի չափ հին և նոր, հայ և օտար լեզուներով յայտնի հեղինակների կրօնական գրքեր։ Այս գրքերի օժանդակութեամբ սկսեցի թարգմանելով Մատթէոսի աւետարանը պարզ հասկանալի լեզուով բացատրել իւրաքանչիւր տան էական նշանակութիւնը, որքան կարելի է, ուղիղ մտօք, բարոյականացնող, զարգացնող և քաղաքակրթիչ դասերով, հաստատված սուրբ գրոց և նախահարց վկայութիւններով։ Այս իմ ձեռնարկութիւնը կարող է համարվել պարզ բացատրութիւն աւետարանի մեր հասարակութեան համար, կարող է ընդունվել կրօնական դասագիրք մեր ուսումնարանների համար և կարող է լինել նիւթ քարոզութեան մեր բարեկրօն քահանայից համար։ Եւ որովհետև գրեթէ այս գիրքը աւարտած եմ, բայց մնում է սրբագրութիւնը, որի համար մեծայոյս եմ մինչև առաջիկայ նոր տարին բոլորովին աւարտած տեսնել Աստուծոյ հոգոր օգնականութեամբը, վասնորոյ յայտնելով ձեզ այս մասին, մեծապատիւ խմբագրապետ, խնդրեմ բարեհաճել այս երկտող նամակս տպագրելով ձեր պատուական լրագրի էջերում հրատարակել այս մասին ի գիտութիւն ազգի։

Վահան քհնյ. Շահունեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք ԲԱԳՈՒԻՑ պ. Աւագ Գրիգորեանցից 5 ռուբլ յօգուտ արտասահմանում հայ թղթակից պահելու գումարի։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են. «Այս տարի մեր քաղաքի հողերի մի մասը, որ արօտատեղերի էր յատկացրած, անիրաւաբար ցանեցին ով միայն կամեցաւ և կարողացաւ։ Որերումս ցանողներից մինին մտրակով ծեծելով կազակները բերեցին, բանտ դրին, որովհետև սա համարձակվեցաւ աղա Բ-ին երբեմն պատկանած, այժմ անխնամ թողված, արտը ցանել»

—

Մեզ հաղորդում են որ Նորերումս Ալէքսանդրապօլի հոգևոր դպրոցում աւարտող աշակերտներից ոմանք, մի երկու այլ անձանց հետ բարեգործական նպատակով ներկայացրին հանրածանօթ «Սամէլ» անհամ ողբերգութիւնը։ Մեր թղթակիցը աւելացնում է որ այդ տեսակ անհամ պիէսաները ոչինչ կրթողական ներգործութիւն չեն կարող ունենալ հասարակութեան վրա, մանաւանդ երբ իաղն էլ անհամ է։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Յայտնի է որքան վնասակար է ծխախոտ քաշելը, մանաւանդ մատաղ հասակի մէջ։ Մեր ընտանիքները պէտք է արգելէին տան և հինգ տարեկանից առաջ պատանիներին ծխելու։ Բայց մեր ախալցխացի տղաները 7 տարեկանից սկսած պապիրոս են ծխում, իսկ երբ փող չունեն ծխախոտ գնելու, հաւաքում են պապիրոսների մնացորդները հիւրասենեակների և տների դռներում։ Այս օրերս մի տղայ բերանի վրա սիֆիլիսի վէրք ըստացաւ. բժիշկը ենթադրում է որ ծխելով պապիրոսի մնացորդը, որ նախ ծխած էր սիֆիլիսով հիւանդ մարդ, թշուառ տղան վարակվեցաւ այդ սարսափելի ախտով։»

—

«Պակ» լրագիրը հաղորդում է որպէս հաստատ, թէ Երևանի քաղաքային բժիշկ, Լեոն Տիգրանեան, ստացել է արդէն կառավարութիւնից իր «Առողջապահական թերթ» հրատարակելու թոյլտուութիւնը։

—

Մարդասպան Լաբիէզ, որ գլխատվեցաւ Փարիզում սեպտեմբերի 7-ին, 1878 թ., զարմացրեց և հիացրեց ամենքին իր հպարտ հանգստութեամբ, հոգու ներկայութեամբ և կամքի հաստատութեամբ։ Նա անվրդով նայում էր, ինչպէս իրանից առաջ գլխատում էին իր ընկեր Բարէին և ինչպէս այդ վերջինի կտրած գլխից արիւնի խոշոր կաթիլները ընկնում էին գետնի վրա, իր ոտների մօտ։ Ժողովուրդը սկսեց ոգեորված կերպով ծափահարել Լաբիէզին։ Մթթէ այդ տեսակ երևոյթներ կարող են կրթողական ներգործութիւն ունենալ ժողովրդի վրա, հարցնում են մահվան պատժի հակառակորդները։

Նոյնպէս և այն ժամանակ մահվան պատժի տեսարանը չէ հասնում իր ցանկացած նպատակին, երբ յանցաւորը, ինչպէս այդ պատահել է մի անգամ Գերմանիայում, այնքան զզուած է լինում կեանքից, որ մինչև անգամ ուրախ է նրանից ազատվելու։ Պատմում են, որ մի չարագործ իր չնորհակալութիւնն էր յայտնում դահճին և նրա բոլոր օգնականներին, հերթով գրկելով նրանց և համբուրելով նրանց ամենքին։ «Որքան չնորհակալ եմ ես, պարոններ, ձեզանից, կրկնում էր նա, որ դուք վերջապէս ազատում էք ինձ այն զզուելի լուծից, որին կեանք են ասում։»

Մի խօսքով հոգեբանական կէտից քննելով մահվան պատժի ներգործութիւնը յանցաւորների այլ և այլ բնաւորութիւնների վրա, քրէական գիտութեան առաջադէմ մասը գալիս է այն եզրակացութեանը, որ մահվան պատիժը չէ հասնում իր ցանկացած նպատակին՝ ազդու և օրինակելի բարոյական դաս լինել ամբոխի համար, որպէս զի հանդիսականները երկիւղ կրեն ապագայում իրանք էլ որ և է յանցանք գործելու։ Այդ ճշմարտութիւնը, ինչպէս երևում է, հասկացաւ ժամանակակից գերմանական օրէնսդրութիւնը և մահվան պատիժը այդ երկրում այլ ևս հրապարակապէս չէ կատարվում, այլ կատարվում է բերդերի պարիսպների ներսում, որտեղ ամբոխը չէ կարող ներկայ գտնվել, այլ ներկայ են գտնվում միմիայն յայտնի պաշտօնական անձինք։ Նոյն օրէնքը հրատարակել է Նորերումս և ռուսաց կառավարութիւնը։ Ուրեմն, ինքն օրէնսդրութիւնը այլ և այլ երկիրներում սկսում է հասկանալ և խոստովանվել որ մահվան պատժի հրապարակապէս կատարելը հնացած և իր անմիջական նպատակին չը հասնող, գուցէ և ամբոխին անբարոյականացնող միջոց է, որովհետև այլ ևս չէ թոյլ տալիս ամենքի աչքի առջև գործադրել նրան։

Այդ տեսակէտից նայելով քրէական ժամանակակից դիտութիւնը հարցնում է՝ աւելի լաւ չէր լինի, ոչ թէ մահվան պատժին ենթարկել յանցաւորին, այլ համարելով նրան հասարակութեան համար վնասակար անդամ, հեռացնել նրան հասարակութենից, աքսորել նրան հեռու և դեռ գրեթէ անբնակ երկիրներ, աշխատեցնելով նրան այնտեղ, դիցուք, երկրագործութեամբ, կամ բանտարկել նրան այն տեսակ բանտերից մինի մէջ, որտեղ ջանում են յանցաւորի վրա բարոյապէս ազդել, կրթել նրան, սովորեցնել նրան մի որ և է արհեստ, կրկին ընտելացնելով նրան աշխատանքին և դարձնելով նրան հասարակութեան պիտանի անդամ։ Այդ տեսակ բանտերից ամենանշանաւորներն են Գերմանիայի Բրուկսալ քաղաքի բանտը և Բերլինի Մօաբիտ անուանված բանտը։

Եթէ մահվան պատժի սարսափելի տեսարանը անզօր է ամբոխի համար բարոյականացնող օրինակ դառնալ, զսպելով նրան յանցանքներ գործելուց, ուրեմն ինչ հարկ կայ մահով պատժել յանցաւորին, կամ մարդասպանին, երբ հմուտ ձեռքերի մէջ ամեն տեսակ չարագործ կարող է ուղղվել և կրկին դառնալ հասարակութեան պիտանի անդամ։

Մենք, ի հարկէ, խօսում ենք այստեղ հասարակ յանցաւորների մասին և ոչ թէ այնպիսի եղեռնագործների մասի, որոնք օրինակ թագաւորասպանութիւն են անում։ Սրանց յանցանքը այն աստիճան սարսափելի է լինում, որ բացի մահվան պատժից ուրիշ պատիժ չէ կարող լինել նրանց համար։

Բայց և այնպէս սրանց պէսների համար էլ կառավարութիւնը Նորերումս վերցրեց մահվան պատժի հրապարակական կատարումն, իսկ թագաւոր Կայսրի ողորմածութիւնը այնտեղ հասաւ որ Նա մինչև անգամ թագաւորասպան Կնոջ Գէլֆմանին բոլորովին չենթարկեց մահվան պատժին, այլ մի քանի չաբաթ առաջ կեանք չնորհեց նրան, փոխարինելով նրա մահվան պատիժը տաժանակիր աշխատանքներով աքսորանքի մէջ, անորոշ ժամանակով։

Գ. Ա.